հիմք է հանդիսացել պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

Դատարանն արձանագրում է, որ պայմանագիրը միակողմանի լուծելու և պայմանագրային պարտավորությունների խախտման փաստերը վիճարկված չհինելու և ոչ իրավաչափ ճանաչված չհինելու, այդ թվում՝ սույն գործով նման պահանջ ներկայացված չլինելու պայմաններում, վիճարկվող որոշումը իրավաչափ է և չի կարող անվավեր ճանաչվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ «Շինպլյուս» ՍՊԸ ընդդեմ ՀՀ կառավարության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ կառավարության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 02.02.2024 թվականին կայացված թիվ 201-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

**<u>6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.</u>**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4-րդ կետի համաձայն՝ դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Սույն գործով հայցվոր դատարան դիմելու համար նախապես վճարել է 60.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, մինչդեռ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ ավել վճարված պետական տուրքի գումարը՝ 10.000 ՀՀ դրամ, պետք է վերադարձնել Հայցվորին և դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ, 234.5-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

1. «Շինպլյուս» ՍՊԸ ընդդեմ ՀՀ կառավարության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ կառավարության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 02.02.2024 թվականին կայացված թիվ 201-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:
2. «Շինպլյուս» ՍՊԸ-ին վերադարձնել ավել վճարված 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի

գումարը:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Դատարանի 21.02.2024թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը՝ արգելել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին թիվ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-1 պայմանագրի կատարման երաշխիք հանդիսացող 47.164.074 ՀՀ դրամը փոխանցել ՀՀ կառավարության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության բանկային հաշվին, պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6.Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Նելլի Հարությունյան**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*